ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 8-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը՝ «Մի՛ երկընչիր, միայն հաւատա» բնաբանով։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Նոյեմբերի 14-ին, շաբաթ առավոտյան, *Մայր Տաճար այցելեց Աֆրիկա-ասիական համերաշխության Լիբանանի կոմիտեի պատվիրակությունը, Լիբանանի պառլամենտական ղեկավարներից մեկի՝ Ջամալ Ջումբլաթի գլխավորությամբ։*

Վերջում հարգելի հյուրերին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։

***

Նոյեմբերի 15-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը՝ «Եթէ ոք այսպիսի մանկտուոյ ընկալցի յանուն իմ, զիս ընդունի» բնաբանով։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Նոյեմբերի 19-ին, հինգշաբթի, *Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, Մայր Աթոռի միաբանության և Ճեմարանի ուսանողության համար դասախոսեց Արտաշես Վրույրը՝ Անիի պատմական հուշարձանների մասին։*

***

Նոյեմբերի 20-ին, ուրբաթ, *Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ռումինիայի և Բուլղարիայի հայոց բարեջան առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, իր արձակուրդը Մայր Աթոռում և իր ծնողների մոտ անցկացնելու համար։*

***

Նոյեմբերի 21-ին, շաբաթ, *«Ընծայումն Ս. Աստուածածնի։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլչուչյանը։*

***

Նոյեմբերի 22-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Նոյեմբերի 26-ին, հինգշաբթի, *Մայր Աթոռ ժամանեց, թեմական գործերով, Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։*

***

Նոյեմբերի 28-ին, շաբաթ, *«Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մեր Թադէոսի և Բարթողիմէոսի»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

***

Նոյեմբերի 30-ին, երկուշաբթի, *Իշման Ս. Սեղանի վրա, եպիսկոպոսական իր անդրանիկ պատարագը մատուցեց Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը և քարոզեց «Քաջալերեցարուք, ես եմ, մի՛ երկնչիք» բնաբանով։*

***

Դեկտեմբերի 2-ին, չորեքշաբթի, Երևանում, արվեստի աշխատողների տանը, տեղի ունեցավ խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի ընդլայնված նիստը՝ նվիրված խաղաղության միջազգային շարժման 15-րդ տարեդարձին։ Նիստին մասնակցում էր նաև Վեհափառ Հայրապետը, որը հանդես եկավ խաղաղության նվիրված ճառով։ Նիստում ելույթներ ունեցան նաև խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ, գրող Ն. Զարյանը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, Արգենտինայի խաղաղության պաշտպանության կոմիտեի անդամ Է. Հուլիո Ցոկկոն, գրող Խ. Գյուլնազարյանը և ուրիշներ։

***

Դեկտեմբերի 3-ին, հինգշաբթի, Մայր Տաճար այցելեց Արգենտինայի խաղաղության պաշտպանության ազգային կոմիտեի պատվիրակությունը, կազմակերպության նախագահ Սոյսես Գերշմանիի գլխավորությամբ։ Հյուրերին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։

***

Դեկտեմբերի 6-ին, կիրակի, Մայր Տաճարում իր անդրանիկ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը և քարոզեց՝ «Ուխտս դիք և կատարեցէք» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։